

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԹԱՐԻԽԱԿԱՆԻ

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ԱՐՄԵՆԻԱ» ՊԱՐՔԵՐԱԿԱՆԸ

Ե.00.01 «Դայոց պատմություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի  
պատվավորությանը՝ ամառային պահանջանային աշխատավայրության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2016

Ալենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Պաշտոնական ընդունակություն

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ բողակից անդամ  
Յովհաննիսյան Ն. Ռ.

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Մովսիսյան Փ. Վ.

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Ներսիսյան Ա. Ա.

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ալենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. մարտի 29-ին ժամը 14<sup>00</sup>-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՆ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ալենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գործադրանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. փետրվարի 27-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար, պ. գ. թ., դոցենտ

Մուրադյան Յ. Ռ.

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** «Արմենիա» թերթի ու Մ. Փորբուգայյան գործիքագիր անդամանում գործունեության պատմության ու հայ քաղաքական մտքի անդամանում ունեցած դերակատարության ուսումնասիրությունը մեր օրերում ունի գիտածանաչողական և արդիական-քաղաքական նշանակություն։ Թերթը եվրոպական միջավայրում հայ պատագրական պայքարի գաղափարական միջավայրում հայության և եվրոպական հասարակությունները միջյան կամքելով, նոր նակարդակի բարձրացրեց հայ քաղաքական միտքը։

Ինչպես հայրեակ տարի առաջ, այնպես էլ ներկա ժամանակաշրջանում, խիստ կարևոր ու սկզբունքային նշանակություն ունի սեփական դիրքորոշումների ու քայլերի հայաստանակենտրոն մեկնակետի հստակեցմը, որը պահանջում է ապագային միտքած ազգային-քաղաքական ծրագրերը կառուցել հայրենաբնակ հայության շահերի առաջնայինության հաշվառման սկզբունքի վրա։ «Արմենիա»-ի ու նրա խմբագրի հայաստանակենտրոն նուածողության հաշվառմն իրատեսական քաղաքականության որդեգրման կարևոր պայման է նաև մեր օրերում։

Մ. Փորբուգայյանի ու նրա թերթի գործունեության լուսաբանումը նպաստում է XIX դարի վերջին քառորդի ու XX դարի սկզբի հայ քաղաքական մտքի սայթաբումների լիարժեք ընկալմանը, քանի որ դեռևս կանում ունեցած գործունեության ընթացքում նա իրեն դրսկորել էր որպես իրապաշտ և լայնանու մտավորական, ուժ արևմտահայության պատագրության ուղղությամբ քաղաքական մտածողության մեջ ուրվագծել էր իրատեսական մարտափարության տեսլականը։ Պատահական չէ, որ նրա դաստիարակած երիտասարդության կողմից վաճում ստեղծված «Արմենական» կուսակցության որդեգրած մարտափարությունը ու ռազմավարությունը խոստումնալից էին և առավել արյունավետ, քանի որ հայոց ազգատագրության հնարավորությունը նախ և առաջ տեսնում էին սեփական ուժին պայմաններու, հայության համախնճան, գաղտնորեն զինվելու և նախապատրաստվելու մեջ։ Ենց այդ մտայնությունն էլ հետագայում հայ պատամարտի հաջողության բանալին դարձավ։

Մ. Փորբուգայյանի ժամանակաշրջանի հայ մամուլը ողովզած էր ռոմանտիկ բնույթի քաղաքական-հրապարակախոսական հրապարակումներով։ Դրանցում հայության պատագրման և հայոց պետականության վերականգնման հարցը ավելի շատ փորձ էր արվում լուծված տեսնել մեծ տերություններին ապավիճելու միջոցով։ Մոտեցում, որն առկա է և խիստ քննադատելի նաև մեր օրերի համար, քանի որ հայության մեջ այսօր էլ լիարժեք հիմնավորված չէ այն համոզմունքը, որ հայ ժողովուրդն ու նրա պետականությունն առանց օտարին ապավիճելու էլ կարող են հզորանալ և ամրապնդվել։ Այսինքն՝ օգնում է հասկանալ, որ անտոք է միջյանցից հստակ սահմանազատել ռազմավարդագրական դաշինքները և կուրորեն ուրիշներին ապավիճելու հայեցակետերը։

«Արմենիա» պարբերականի տարաբնույթ հոդվածները կարող են նպաստել հայոց մեջ քաղաքական նոր մշակույթի ձևավորման ու զարգացմանը, այն մշակույթի, որ բանակեծների կամ այլախոհության պայմաններում մատնանշում է հանդուժողականության ոգին, որովհետև դրանք ծնվում են հայոց քաղաքական պատմագան ավելի լավ տեսնելու, քան սեփական հավակնությունների հենքի վրա։ Գաղտնիք չէ նաև, որ ապագային միտքած ճիշտ ծրագրեր ունենալու և հստակ գործելու անհրաժեշտությունը պարտադրում է մեր պատմության սպիտակ թերթի

բացառումն ու ամբողջական և անսխալ իմացությունը, որը հնարավորություն կտու անցյալի սխալներից դասեր քանի և առաջ ընթանալու հսկասարակչըրոված ու իսատառուն քայլերով: «Արմենիա» թերի ինքնատիպ գաղափարախոս-ստերյունը կարող է կարւոր դեր խաղալ նաև մեր օրերում լայն տարածում գտած օտարամուտ քաղաքական շարժումների ու գաղափարական հոսանքների հանդեպ ճշգրիտ ու առարկայական դիրքորոշումներ որդեգրելու և նրանց թերած աշխարհաքաղաքացիական հովերից ազգային նվիրական նպատակները պաշտպանելու գործում, ինչն ամեննին էլ չի բացառում ազգային ու համանարդկային արժեքների համադրության անհրաժեշտությունը:

**Պատմանախրության նպատակն ու խնդիրները:** Գիտականորեն լուսաբանված հիմնահարցերի ներկայացված շարադրանքի հիմնա վրա կարող ենք արձանագրել, որ ատենախոսության նպատակն «Արմենիա» թերթում առկա հրապարակումների, արխիվային նորահայտ փաստերի, տպագիր սկզբնադրյուրների, հուշագրությունների, պարերական մամուլի ու հիմնահարցը ներառող գիտական գրականության հաճակողմանի հետազոտման հենքով ներկայացնել հայ քաղաքական մամուլի առաջին վար ներկայացուցիչ<sup>1</sup>, 1885-1923 թթ. Մարտել քաղաքում Մ. Փորբուգայանի հնմբագրությամբ<sup>2</sup> լույս տեսած «Արմենիա» թերթի ամբողջական պատմությունը՝ գործորեն այն իր ժամանակի կարևոր իրադարձությունների լուսաբանման հետ: Առանձնակի ուշադրություն ենք դարձել այն հարցեր, թե ինչպիսի զարգացում ապեց պարերականը 1908 թ. հեղաշրջումից հետո և այրուետ ինչպես սկսեց պատկերացնել արևոտահայության ապագան:

Ենթով խնդիր ծավալուն լինելուց վերլուծել ենք թերթի առավել կարևոր հրապարակումները, շրջանցել հիմնահարցին հայանցիկ անդրադարձած հեղինակներին, առավելապես օգտագործել թեմային առնչվող կազմակերպությունների ծրագրային փաստաթղթերը, հասարակական-քաղաքական և կուսակցական գործիքների այն աշխատությունները, որոնք վերաբերում են «Արմենիա»-ին: Գրականության մեջ արձարքված մեզ հանար անընդունելի կարծիքները ենք մեր տեսակետների պոգիտիվ շարադրանքով:

Ըստ ամենային արժենորել ենք հետազոտվող ինդիքի նվիրված արխիվային վակերաբերն ու տպագիր սկզբնադրյուրները, հուշագրություններն ու ուսումնասիրությունները, շեշտադրել այն հարցերը, որոնք մեր կարծիքով ցայսօր ըստ արձանվուն չեն լուսաբանված պատմագիտական գրականության մեջ: Ուսումնասիրության առարկայի խորագրանք հետազոտման նպատակով համակարգային վերլուծության ենք ներարկել մի ամբողջ խումբ շաղկապված և փոխականացնավորող հիմնահարցեր: Դրանք են՝

■ XIX դարի վերջին և XX դարի առաջին քառորդին Արևմտյան Հայաստանում տիրող ծանր կացությունը և որպես այդ իրավիճակի օրգանական

<sup>1</sup> Մինչ «Արմենիայի» հրատարակվելը հայ իրականության մեջ լույս են տեսել «ազգային, քաղաքական և գրական կամ բանասիրական» խորագրը կորոշ 36 պարերականներ: Դրանցից 27-ի խորագրը թեև սկսվում էր «քաղաքական» բառով, սակայն իրականում միայն 1884-ից Թիֆլիսի Դաստուկանի խմբակի կողմից Սովորայում ընդամենը մեկ տարի լոյս տեսած «Ազատութեան Աւետարեթը»-ն էր Կրևուտյան Հայաստանն ազատելու կոչ անում, որին գումարվեց նաև սոցիալիստական գաղափարախոսությունը, իսկ արևմտահայ իրականության մեջ ազատության խնդիրները տևական ժամանակ բարձրացնում էր միայն «Արմենիա»-ն:

<sup>2</sup> Մ. Փորբուգայանից հետո՝ 1921-1923 թթ., թերթը խնմբագրել է Եղիշե Թորոսյանը:

շարունակություն՝ որակական նոր նակարդակի ազատագրական գաղափարախո-ստերյան գաղափարական համեմատ գաղափարական պատերազմից հետո հայության համբնիանուր իհապափակությունը մեծ տերություններից ու ազատության հասնելուն որպես նախապայման սեփական ուժին կոթնելու մտայնության աստիճանական կարևորումը,

■ 1877-1878 թթ. ուս-թուրքական պատերազմից հետո հայության համբնիանուր իհապափակությունը մեծ տերություններից ու ազատության հասնելուն որպես նախապայման սեփական ուժին կոթնելու մտայնության աստիճանական կարևորումը,

■ Փորբուգայան-Արմենական կուսակցություն առնչությունները,

■ 1908 թ. Երիտրուրքական հեղաշրջնան հետևանքով իրավիճակային նոր փոփոխությունները,

■ Հայկական հարցին և մեծ տերություններին, հայ իրականություն գոյություն ունեցող թերություններին, ազգային կուսակցություններին, հայոց Սեծ եղենին, կանավորական շարժմանը և մի շարք այլ կարևոր հարցեր: Աշխատանքում առանձնահատուկ շեշտադրյում է կատարվել «Արմենիա» թերթի առաջին տասնամյակի համարներին, եթե այն նոր «գաղափարների շտեմարան» էր, և բոլոր իրավարակումները տոգորված էին ազատախոհությամբ, պայքարի ոգով և ապագայի նկատմամբ լուսավոր հավատով:

**Ստեղախտության ժամանակագրական շրջանակները:** Աստենախտությունն ընդգրկում է հիմնահարցի տեսակետու ու լունիշային իրադարձություններով որոշակիացված ժամանակահատված՝ 1885-1923 թթ., այսինքն՝ «Արմենիա»-ի լույսընթայնան բոլոր տարիները: Նշված ժամանակագրական հենքի վրա էլ քննարկվում են հայոց կյանքում տեղի ունեցած իրադարձություններին հասարակական մտքի դիրքորոշումների վերաբերյալ թերթի լուսաբանություններն ու տեսակետները: Ներկայացրել ենք 1877-1878 թթ. ուս-թուրքական պատերազմից հետո Արևմտյան Հայաստանում ստեղծված սոցիալիստական կառուստներու ու կարգավորություններու մեջ աշխատությունները, որոնք վերաբերում են «Արմենիա»-ին: Վահագուման մտքի դողովությունը կարծիքում այս կարգավորությունը կատարվել է 1887-1888 թթ. ուս-թուրքական պատերազմից հետո Արևմտյան Հայաստանում ստեղծված սոցիալիստական կառուստներու ու կարգավորություններու մեջ աշխատությունները, որոնք վերաբերում են «Արմենիա»-ին:

<sup>3</sup> Դեռևս XIX դարի առաջին կեսին այդպիսի գաղափարախոսություն արևմտահայ իրականության մեջ արդեն առկա էր: Եփուական ճնշվող ժողովրդների՝ XIX դարի արարին կեսի ազգային-ազատագրական պայքարի անմիջական ազդեցության նորը 1850-1860-ական թթ. ծևավորված հայ հասարակական հոսանքների ներկայացրուցիները (Ստ. Ուկանյան, Ս. Սամուրյան, Յ. Ս. Սկանյան, Գ. Զիլինիկյան, Մ. Պեշիկարչյան և այլք) իրենց աշխատություններում և կարգավորակումներում անդրադառնություն էին արևմտահայության ազատագրության խնդիրներին, փորձում էին ուղիներ մատնամշել և անզամ պայքարի իր կոչում երիտրապարության: Ավելին, դեռևս XIX դարի սկզբին կմիթրայան միարանության անդրանիկ կողմէն վորագուրդը ուղին կարգավորվեց մտավոր զարթության ազատագրական փուլը դրսնորվեց մտավոր զարթության և

կրթալուսավորական շարժման տեսքով: Այդ գործում նշանակալի դերակառարությունը ունեցավ Փորբուզայանը, ով, խուսափելով ձերբակալությունից, հեռացավ Երկրից և 1885 թ. Մարտելում սկսեց հրատարակել «Արմենիա» թերթը:

**Ուսումնափորության մեթոդաբանությունը:** Հնտագոտության մեթոդաբանական հիմքում մեր կողմից ուսումնասիրված աղբյուրների և գիտական գրականության համեմատական ուսումնասիրությունն է: Հնտագոտության մեջ շարադրանքի հաջորդականությունը պայմանավորված է ժամանակագրական և թեմատիկ սկզբունքով: Ուսումնասիրության պատմահամեմտական մեթոդի կիրառումը հմարավորություն է ընծերել շատ դեպքերում նորովի լուսաբանելու բազմաթիվ հիմնախնդիրներ և որոշակի առաջարկություններով նպաստելու դրանց արդյունավետ ընկալմանը: Աւտենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած է «Արմենիա» թերթի պատմության և նրանում առկա կարևորագույն հրապարակումների անկողննակալ ու անաչառ հետագոտության սկզբունքը:

**Աւտենախոսության գիտական նորույն ու գործնական նշանակությունը:** Ընդհանրացնելով ատենախոսության մեջ լուսաբանված պատմագիտական նորույն հանդիսացող հիմնախնդիրների ներկայացումը՝ կարող ենք որոշակիութեան արձանագրել, որ հետազոտության իմանական անվիճելի գիտական նորույնը վաստակաշատ մտավորական Մ. Փորբուզայանի կյանքի, հասարակական-քաղաքական գործունեության և դրա զարդարական «Արմենիա» թերթի պատմության ամբողջական, համականական ուսումնասիրությունն է, որը կատարվում է առաջին անգամ: Աւտենախոսության մեջ հայ ժողովորի համար բացի բացառական բացառական գործներում ներկայացված են համաշխարհային պատմության կարևորագույն հրադարձությունների անմիջական առնչությունների խորապատկերում և «Արմենիա» թերթի՝ որպես այդ իրողությունների տարեգիր, արձագանքների և արտահայտած տեսակետների հոլովությունը: Ուսումնասիրության նորույն անփոփ ձևով ունի հետևյալ տեսքը.

ա) առաջին անգամ ներկայացվում են Սկրիժ Փորբուզայանի կյանքն ու գործունեությունը և «Արմենիա» թերթի ամբողջական պատմությունը,

բ) վերլուծվում են «Արմենիա» թերթում տեղ գտած կարևորագույն հրապարակումները, և այդ հենքի վրա ցոյց է տրվում, որ պարբերականն արևմտահայ կյանքի տարեգիրն էր, իրականության անեղծ հայելին,

գ) լուսաբանվում և շրջանառության մեջ են դրվում նոր տեղեկություններ ու փաստեր թերթի սկզբանվորման, գործեալիքնայի իմանական ուղղությունների և օսմանյան թօնաժիրության դեմ պայքարի մեթոդների և ձևերի մասին,

դ) լուսաբանվում են թերթի կատարած ծավալուն աշխատանքները եվրոպական հասարակությանը հայոց խնդրին տեղեկացնելու ուղղությամբ և այն, որ թերթը հայ ազատագրական պայքարը Եվրոպայից կախյալ հանարելու ռազմավարությունը համարում էր անարդյունավետ,

ե) ներկայացվում է Հայկական հարցի վերաբացման իրողությունը, և մանրամասն քննարկվում են նրա լուծման տարբերակներն ըստ թերթի նյութերի,

զ) լուսաբանվում են Հայկական հարցը ցեղասպանության միջոցով լուծելու և այն օրակարգից հանելու օսմանյան իշխանությունների կանխակալ ծրագրերը,

է) Հայաստանի անկախության և խորհրդային շրջանի առաջին տարիները, թուրք-հայկական հարաբերությունները և որոշ ռազմաքաղաքական իրադրություններ լուսաբանվել են թերթի հրապարակումների հենքի վրա:

Աւտենախոսությունն ունի ոչ միայն գիտական, այլև կիրառական նշանակություն: Անժմխտելի է, որ հասարակության և պատմության «Պարույրածե» զարգացման տեսությունը<sup>4</sup> հայ ժողովորի պատմության դեպքում քննությունը բանում է բանում: Յնտենապես, այդ հենքի վրա կատարված վերլուծությունների արդյունքում կատարված եղուահնգումները Հայաստանի անկախ պետականության կայացման գործներացի շարունականության պայմաններում ծեղը են թերում գործնական նշանակություն, հատկապես անցյալում թույլ տրված սիսամերը հասկանալու և դրա կրկնելուց գերծ մնալու առողմությունը: Աւտենախոսությունն ունի նաև պատմաճանաչողական կարևոր նշանակությունը, քանզի կարծում ենք, որ հետազոտության արդյունքները պահանջված են հայ ժողովորի նոր շրջանի պատմության, մասնավորապես՝ քաղաքական մանուկի, ազգային կուսակցությունների, ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության, սեփական ժողովորի պատմության պայքարի նվիրյալներին վերաբերող հարցերն ուսումնասիրողների կողմից: Դրանք կարող են օգտագործել նաև բուհական ու գյուղական դասագրքերում կամ դասավանդելու ընթացքում:

**Ուսումնափորության փորձաքննությունը:** Աւտենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդում: Այն քննարկվել և հրապարակային պաշտպանության և երաշխավորվել նույն ինստիտուտի նոր պատմության բաժնի նիստում:

Աւտենախոսության թեմայով հրատարակվել են հայերեն և ռուսերեն մենագրություններ, հոդվածներ հայրենի և արտասահմանյան գիտական պարբերականներում, կարդացվել են զեկուցումներ գիտական նատաշրջաններում:

**Հնտագոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնափորության աստիճանը:** Թեմայի գիտական լուսաբանման համար բացառական բացառականությունը կարևորություն ունեն «Արմենիա»-ում հրապարակված նյութերը, տպագիր սկզբանաբար ներկայացները, արխիվային նյութերը, տպագիր սկզբանաբար ներկայացները, մանուկի հրապարակումները և հետազոտության մեջ արձարձված այլ հարցերի վերական գրականությունը:

Թեմայի գիտական լուսաբանման համար բացառական կարևորությունը ունեն «Արմենիա»-ում հրապարակված նյութերը, հատկապես Մ. Փորբուզայանի բնույթի խմբագրականները<sup>5</sup>, քանի որ «Արմենիա»-ի ու Ս. Փորբուզայանի վերաբերյալ արխիվային վավերագրերն այնքան էլ առատ չեն: Օգտագործել ենք նյութեր նաև որոշ էլեկտրոնային կայքերից, ինչպես նաև բանագործել ենք նյութեր նաև որոշ էլեկտրոնային կայքերից:

<sup>4</sup> Ժամանակակից ամերիկացի հոգեբան Քեր Գրեյվի արժեքների էվլուսիօնիայի մասին հասարակության և պատմության «Պարույրածե» զարգացման տեսությունը վերաբերում է մարդու և հասարակության պատմության օրինացիություններ ու սահմանումներ քննություն են բնույթ նաև հայոց պատմության զարգացման գործներացներն ուսումնասիրելու ժամանակ, մե՛ս Դօն Էդվար Բեկ, Կրիստոֆեր Կ. Կոոն, Շպիրալիա դինամիկա. Սուրալյա լուսատանքում և աշխատանքում է անարդյունավետ,

<sup>5</sup> Թերթի որոշ խմբագրականների պահպան են ՀՀ ազգային գրադարանում, Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի բանգարանում /ՑԱՐ/ և Ս. Մաշտոցի անվան Մատենադարանում: Որոշ մասն է՝ Թբիլիսի Զավախիշվիլու անվան համայստանական գրադարանում, որոնք ֆոնդագրաված չեն և որպես անմշակ նյութ՝ գրանցված են գՏ-58 համարի ներքո: «Արմենիայի» որոշ համարներ են գտնվում են Վիեննայի Միջազգային գրապահուղությունում, մե՛ս ֆ. 1.254, ֆ. 1.255 և ֆ. 1.155:

<sup>6</sup> Wikipedia.com, Hy.wikisource.org, Editions. sigest. Net, www.azator, gr/yushatetr/.

հիմնահարցին առնչվող փաստագրական վերլուծական հայերեն<sup>7</sup>, ռուսերեն<sup>8</sup>, անգլերեն<sup>9</sup> և թուրքերեն<sup>10</sup> ժողովածուներից:

Թեճայի գիտական լուսաբանման համար ադրյուրախտական հիմք են ծառայել արխիվային նյութերը, որոնք թեև շատ չեն, սակայն լույս են սփոռու հիմնահարցի բազմաթիվ կողմերի վրա: Կարևոր են հատկապես Հայաստանի ազգային արխիվի<sup>11</sup>, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարանի<sup>12</sup>, պետական պատկերասրահի<sup>13</sup> մի շարք Փոնդերի նյութերը:

XIX դարի վերջի և XX դարի առաջին տասնամյակների հայոց պատմության իրադարձություններով հարուստ ժամանակահատվածը հաճախ է դարձել ուսումնասիրության առարկա, գրվել են մեծաքանակ և բարձրարժեք պատմագիտական աշխատություններ, որոնք որոշ վերապահումներով մեզ համար եղել են ուղենչային<sup>14</sup>: Ժամանակաշրջանի տարրեր հիմնախմբիներ

<sup>7</sup> «Արմենիա»ի յուշարար, Ա տարեկան (1885-86), Մարտել, 1890, Հայաստանը բուրժուական դիվանագիտության և սովորական արտաքին բաղադրականության փաստաթրեթուս (1828-1923), Զ. Կիրակոսյանի հմբարդությանը, Ե., 1972, Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (փաստաթրեթի և նյութերի ժողովածու), Ս. Ներփիսյանի խմբագրությամբ, Ե., 1991, Վրեննական կազմակերպություն, ՈՎԿ հիմնական ծրագրեր, կանոնագրեր և վաւերագրեր, Պեյրուր, 1988, Ծրագիր և կանոնագիր Գաղափարական միութեան (Արմենօ-Ֆիութեանկան միացեալ կազմակերպություն), Լուսոտն, 1907, Հայապետրեական մամուլ, մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, կազմեց Բարիլյան Ա., 1986, Հայ պարերեական մամուլի մատենագիտություն (1794-1967), Համահավաք ցանկ, կազմեց՝ Ա. Կիրակոսյան, Ե., 1970:

<sup>8</sup> Армянский вопрос и геноцид армян в Турции 1913-1919, сост. В. Микаелян, Е., 1991, Положение Армении в Турции до вмешательства держав въ 1895 г., Москва, Тип. "Рассвет", 1896, Черная Книга, Знаменитые иностранцы о турецких преступлениях конца XIX века и о геноциде армян в Османской империи в 1915 году, составитель А. Исоян, Е., 2012.

<sup>9</sup> British Documents on the Ottoman Armenians, Ankara, 1989, pp. 547-550 pages.

<sup>10</sup> Documents Diplomatiques Ottomans: Affaires Armeniennes (ed. by Bilal Şimşir), vol. 1 (1886-1893), Ankara, 1985.

<sup>11</sup> ՏԵՌ ՀԱԱ, ֆ.ֆ. 51, 121, 190, 408, 420, 424, 427, 453, 1267, 1456 և այլն:

<sup>12</sup> ՏԵՌ ԳԱԹ, ֆ.ֆ. «Ա. Արփիարյան», «Ա. Չոպանյան», «Ա. Բարխտության», «Գ. Լևոնյան», «Հավաքածու սփյուռքահայ գրողների և մտավորականների», «Ա. Յովհաննիսյան», «Վ. Մաթեյյան», «Բ. Նավասարյան», «Ա. Փորբուգյան», «Ա. Հայկունի» և այլն:

<sup>13</sup> Հայաստանի պատմական պատկերասրահ, հուշահետաքրյան բաժին, ֆ. 60, տ. 11, թր. 27, 28: Թերեմելյան Փ., Կյանքի հուշերը (մերենագիր): Մի քանի արժեքավոր վավերագրեր էներ ենք թերել մեր սփյուռքահայ բարեկանների օգնությամբ:

<sup>14</sup> Լեռ. Թուրքահայ հեղափոխության զաղափարաբանությունը, հ. Ա, Ե., 1994, Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Ե., 1997, Սմինյան Հ., Անդրանիկի ժամանակը, Ե., 1996, նոյնի՞ Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991, Գայոյան Գ., Հայաստանը և ներ տերությունները 1917-1923 թթ., Ե., 1999, Գիլզալեան Գ., Պատմական խնդիրներ, Մ. Փորբուգյանն (մի էց յետափառական մտքի պատմությունից), Պեյրուր, 1937, Ներսիսյան Մ, Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնատիրության դեմ, Ե., 2002, Խառաւոյան Ա., Արևոնահայ հասարակական մտքի և հրապարականության պատմությունից, Ե., 1980, Համբարյան Ա., Հայ հասարակական քաղաքական միտքը արևոնահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990, նոյնի՞ Ազատագրական շարժումները Արևոնահայ Հայաստանում (1898-1908), Ե., 1999, Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Ե., 2005, Վարդանյան Հ., Արևոնահայերի ազատագրության հարցը և հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում, Ե., 1967, Սարովհանյան Ն., Հայկական հարցը մինչխորհրդային հասարակական քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Ե., 1997,

քննարկելիս դրանց հեղինակներն անդրադարձել են նաև «Արմենիա» թերթին ու Ս. Փորբուգյանին: Այդ աշխատությունները պայմանականորեն բաժանել ենք չորս խմբի:

ա) մինչխորհրդային, բ) խորհրդային, գ) հետխորհրդային շրջանում և դ) Սփյուռքում գրված ուսումնասիրություններ:

Մինչխորհրդային շրջանում «Արմենիա» թերթին նվիրված աշխատություն մեզ հայտնի չէ: Սակայն քննուած առարկա ժամանակաշրջանին նվիրված այն ուսումնասիրություններում, որտեղ խոսվում է Փորբուգյանի մասին<sup>15</sup>, անդրադարձներ կան նաև «Արմենիա»-ին: Դրանց բնորոշ է այն, որ թերթի և խճագրի մասին միայն գովեստի ու գնահատանքի խոսքեր են: Հավանաբար դա պայմանավորված է հորեալանների առիթներով գրված լինելով: Սակայն եական դերակատարություն է ունեցել նաև Ս. Փորբուգյանի և նրա «Արմենիա»-ի լուրջ ավանդը հայոց զարդումի ու ազատագրական պայքարի գաղափարախոտության մշակման գործում:

Վանի վարժակետանոցի նախկին սան Պ. Թորոսյանը, անդրադարձով Փորբուգյանի 40-ամյա գործունեությանը, բարձր է գնահատել նրա ներդրումը հայությամբ կրթելու, համախմբելու և պայքարի կոչելու գործում: Համարելով նրան աննկուն կամքով օժտված «լուսաւորութեան անդրանիկ կամաւոր գինուրո»՝ հեղինակը շշշուում է, որ Փորբուգյանը «40 տարի ան տրնած է Հնբանվը-տահութիւն» ներշնչողներից առջին եղավ, «40 տարի ան տրնած է Հայը իւր դարեւոր թքրութեանն սրափեցնել»<sup>16</sup> և իր աննկուն կեցվածքով վարակել շատերին:

Փորբուգյանի գործունեության 40-ամյա և «Արմենիա»-ի հրատարակության 25-ամյա հորեալանների առիթիվ ժամանակի նշանավոր մտավորականների հեղինակած հովվածների փաստառատ ժողովածուն<sup>17</sup> հարուստ է զնահատանքի խոսքերով: Հեղինակները<sup>18</sup> մեծարում են նրան «նվիրյալ մանկավարժ», «լայնախոհ հրապարակագիր», «կրօստ հայրենասեր» ու այլ բնորոշումներով և իրավացիորեն ընդգծում, որ նա իր հավատի ուժով հայությանը թարմ լիցք ներարկեց:

<sup>12</sup> Հազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Ե., 2001, Կոչար Մ., Արմանո-տուրքական ազգային հայության պատմության առաջնային առաջարկած առաջնային առաջարկավարժականների հեղինակած հովվածների փաստառատ ժողովածուն՝ հարուստ է զնահատանքի խոսքերով: Հեղինակները<sup>18</sup> մեծարում են նրան «նվիրյալ մանկավարժ», «լայնախոհ հրապարակագիր», «կրօստ հայրենասեր» ու այլ բնորոշումներով և իրավացիորեն ընդգծում, որ նա իր հավատի ուժով հայությանը թարմ լիցք ներարկեց:

<sup>15</sup> Թորոսեան Պ., Ո՞վ է Սկրտիչ Փորբուգյանամ, Կ. Պոլիս, 1912, նոյնի՞ Քառասուն տարուամ աշխատատրը, Կ. Պոլիս, 1914, Վարամդեան Մ, Հայկական շարժման նախապատմությունը, հ. 1, հ. 2, մնկ., 1912, Պագի Խան, Քառասուն տարի, Կ. Պոլիս, 1914, Վասիլեան Պ., Յորելեարը եւ Կրարատեան ընկերութիւնը և ուրիշներ, Կ. Պոլիս, 1918, Սասպահ-Գիլեան Ս., Պատասխանառությունը, Փոլիսիւն, 1916, Կարապետեան Գ., Մօտաւոր անցեալի յիշատակներն, Կ. Պոլիս, 1919, Ա-Դո, «Անձ դեպքերը Վասպուրական 1914-1915 թթ.», Ե., 1917, Մյամիկեան Ա., Ազգային հարցի առիթիվ, Սոլկվա, 1919, Աճառեան Հ., Տաճկահայությունը հայոց պատմությունը, Նոր Նախիջևան, 1915 և այլն:

<sup>16</sup> Թորոսեան Պ., Ո՞վ է Սկրտիչ Փորբուգյանամ, Կ. Պոլիս, 1912, էջ 9:

<sup>17</sup> Կենսագրական գծեր, Քառասուն տարուամ աշխատատրը, Կ. Պոլիս, 1914:

<sup>18</sup> Աշխատանքը չժանրաբեռնելու համար ձեռնպահ ենք մնում բոլոր 23 հեղինակների անուն-ազգանունները թվարկելուց:

Մինչխորհրդային շրջանում զգալի թիվ են կազմում կուսակցական գործիչների աշխատությունները<sup>19</sup>: Դրանցում Փորբուզայանը համարվում է ազատագրական պայքարի գաղափարախոսության նշանող, կրթալուսավորական գործիչ: Իսկ ՀՅԴ տեսարան Միքայել Կարանյանը, ներկայացնելով նշանական պաշտօնության հայերի վերազարդումի գործընթացը, համարում է, որ այդ շարժման ողբից մինչև պայքարի հրավիրող գործիչները դարձան «այն ժամանակական հայութեան խիդը»<sup>20</sup>: Իսկ այդ սերնդին համարում է ազատագրական շարժման «ուժ-գաղափարի», «իրան-գաղափարի» ստեղծիչ<sup>21</sup>: Այս որակումները, անկանությունը, վերաբերում են նաև Ս. Փորբուզայանին:

«Արմենիա» թերթի մասին մինչխորհրդային շրջանում զգալի թվով հրապարակումներ կան ժամանակի մամուլում: Կ.Պոլսում լույս տեսնող «Աւետարեր»<sup>22</sup> շարաբթերը «Ո՞վ է Փորբուզայեան» խմբագրականում նեճարում է Ս. Փորբուզայանին «անձնուեր համարային գործիչ», «բարի յեղափոխական», «առաջին ուժ քարոզը կը հասկնար ժողովուրդ» արտահայտություններով, ուժ խոսքը զուլալ առվակի նման «լուալով հանդերձ միսալ գաղափարներ, բարձր իտելաներ դիւրամարս կըներ»<sup>23</sup>: Այսուհետև իրատեսորն ընդգծվում է, որ փառափրությունը նրա մեջ խպառ բացակայում էր և առանձնացնելով պարզ ու հստակ գրելատօն՝ ներկայացնում, թե ինչպիսի հմտությամբ էր նա մերժում ընդդիմադիրների հիմնագործք պարումները: Այսուհետև հեղինակը վկայակուում է «Արմենիա»-ի բանաձևամ մի կարևոր դրույթ: «Ոչ մի Դայ իրաւունք ունի սեւլո թե ինք բան մը չկրնար ընել խեղծ ազգին համար: Մինչեւ անգամ եթե արժեք գրո մը ըլլաս, գրոն կրնա 1 արժող Դայ եղօր մը քով կայսելով՝ 10 շինել»<sup>24</sup>:

«Ազատ թեմ» պարբերականն է հեղափոխական առաջին սերնդի ու նրանց գաղափարախոսների մասին հիացմունքով խոսում: Միանգամայն համամիտ ենք թերթի հայտնած այն կարծիքին, որ որտեղ խմորվում էին հեղափոխական գաղափարներ, որտեղ մտադրություն կար զբաղվելու Դայաստանի ազատագրության խնդիրներով, բնավորությամբ նեղմ, մարդասեր Ս. Փորբուզայանն այնտեղ էր: Ա. Արփիայանի բնորշչանը «Փորբուզայեանը ազատութեան շունչ մը փշեց ամրող Վամի վրա: Առանց Յեղափոխութիւն բառն արտասանելու յեղափոխական սերունդ մը պատրաստեց Վասպուրականում»<sup>25</sup>:

<sup>19</sup> Արամեանց Յն., Վերածնունդի երկունքը, Կ. Պոլս, 1918, Ղարաքեան Գ. (Արկոմեդ), Անցեալի յիշողութիւններից, Թիֆլիս, 1918, ճամկովեան Յ. Յիշատակներ հայկական ճամատամեն, մաս Ա, Կ.Պոլս, 1913, Սապահ-Գիլեան Ս., Ինքնաւար Յայաստան, Կ. Պոլս, 1915, նույնի՝ Պատասխանատունները, Կ. Պոլս, 1916, Վարանդեան Ս., Յայկական շարժման նախապատմութիւնը, Ժնև, 1912, Յ. Կ. 2 և այլն:

<sup>20</sup> Վարանդեան Ս., Յայկական շարժման նախապատմութիւնը, Ժնև, 1912, հ. 1, էջ 13:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 14:

<sup>22</sup> «Աւետարեր» Ամերիկյան միսիոներաց ընկերության պարբերականը լույս է տեսել Կ.Պոլսում 1855-1915 թթ. նախ՝ որպես երկշաբաթեր, ապա՝ ամսաթեր: Պարբերականի խնդրագիրներ են եղել Զ. Գրինը, Յ. Բարնումը, Գ. Սերալմը, Ե. Բիսու ու ուրիշներ:

<sup>23</sup> «Աւետարեր», թիվ 14, Կ.Պոլս, 8 ապրիլի, 1911, էջ 328-331:

<sup>24</sup> Նույն տեղում:

<sup>25</sup> «Նոր կեանք», 1899, թիվ 18:

ԱՄՆ-ում լույս տեսնող «Կոչնակ» պարբերականն է<sup>26</sup> Ս. Փորբուզայանին բնութագրում է որպես ազգային ու կրթական «գործերուն հմուտ», անաշար ու անկաշար, վեհանձն, անկեղծ և հայրենասեր, «կարող գրող ճը, յաջող ուսուցիչ», «վիթորիկ հրաւիրող լեռ մը բլուրներուն մէջ» ով ջանահրության շնորհիվ միշտ մեծ արդյունք էր ապահովում<sup>27</sup>: Դայ իրականությունում, թերթի Ռուսաս հոդվածագրի կարծիքով այդ շրջանում ոչ մեկն այնքան արագ չներշնչեց և «շարժման մէջ չըրա Դայ ըսանուոր ու այդափի կարծ ժամանակի մէջ այդշափ մեծ արդիւնք չցուցուց»<sup>28</sup>: Որակումներ, որոնք այնքան էլ հեռու չեն իրականությունից:

«Արմենիա»-ին ընդդիմախոս պարբերականների մեծ մասը կուսակցական պաշտոնաթերեր էին<sup>29</sup>, մի մասն էլ՝ ոչ<sup>30</sup>: Առավելապես արձագանքելով «Արմենիա»-ի հրապարակումներին՝ դրանք հրապարակում էին նյութեր, որոնց թերթը կամ չէր արձագանքում, կամ պատասխանում էր հավասարակշռված ու առանց մաղձի: Ավելի հաճախակի էին բանավեճերը «Չնչակ»-ի ու նրա արբանյակների («Սարտ», «Ապուակ» և այլն) հետ: Անմիջապես վճռական գործողությունների կողմնակից հնչայյանները «Ժամկետանց», «պահանողական» և նմանատիպ ոչ այնքան իրավացի որակումներով քննադատում էին աստիճանական վերափոխումների կողմնակից Ս. Փորբուզայանին:

Փորբուզայանին զայրացրել էր, որ «Ազատ թեմ»-ը սուտ գրայարտություններով հանդենեց էր սրբապիծել հայ ազատագրական պայքարի նախասակ Ս. Ավետիսիսանի հիշատակ՝ մեղադրելով նրան Ամերիկայում հեղափոխության անունով գործուներ հավաքուում և Փորբուզայանի հետ իրենց կարիքները հոգացու: համար<sup>31</sup>: Նա պատասխանում էր, որ մեղադրելու համար մարդիկ պիտի պատմություն իմանան և հեղափոխության հերոսներին, որպեսզի անհիմն չարժեն նրանց հիշատակը<sup>32</sup>:

Փորբուզայան-արմենականներ հարաբերությունները<sup>33</sup> քննարկելով Բոստոնի «Ազգ», Կառնայի «Իրաւունք» և այլ թերթեր հորդորում էին Ս. Փորբուզայանին իրաժարվելու արմենականների հանդեպ ժխտողական կեցվածքից: Եթե վերջին մերժեց, «Իրաւունք»-ը մեղադրեց Ս. Փորբուզայանին «արմենիական» բառը սեփականաշնորհելու համար<sup>34</sup>: 1890-ականների վերջերից «Արմենիա»-ն կրկնում էր ինքն իրեն, որդեգրել էր զգուշավոր կեցվածք

<sup>26</sup> «Կոչնակ» պարբերականը լույս է տեսել 1900 թ.-ից: 1919 թ. դարձել է «Կոչնակ Յայաստանի», իսկ 1921-ից «Պայաստանի կոչնակ» մինչև 1968 թ. սկզբում Բոստոնում, ապա՝ Նյու Յորքում, որպես շաբաթեր, անուհետև դարձել է անսագիր: Տարբեր տարիների պարբերական խմբագրելու են Վ. Քյուրցյանը, Խ. Պեննեյանը, Յ. Խաղոյանը, Վահե Յայկը, Ա. Պետիկյանը և ուրիշներ:

<sup>27</sup> Նույն տեղում:

<sup>28</sup> «Կոչնակ», 8 ապրիլի, 1911, էջ 234-327:

<sup>29</sup> «Չնչակ», Ապառու, Յայկական կոչնակության պաշտոնաթերեր, լույս են տեսել Լոնդոնում, «Նոր կեանք», Վերակազմայալ Յայական կոչնակության, Լոնդոն, «Իրօշակ», Թիֆլիս, ՀՅԴ պաշտոնաթեր, ուանկավարների «Ազգ», Բոստոնում, «Արեւ», Ավեսսանդրիայում և այլն:

<sup>30</sup> «Մշակ», Թիֆլիս, «Ապառու», Յայկական կոչնակության պաշտոնաթերեր, «Իրաւունք», Վահե Յայկ, «Պատասխան», Լոնդոն և այլն:

<sup>31</sup> «Ազատ թեմ», 1906, ապրիլի 21:

<sup>32</sup> Նույն տեղում:

<sup>33</sup> Այս խնդիրը ստորև մանրամասն քննարկվում է:

<sup>34</sup> «Իրաւունք», 1908, ապրիլի 9:

և դարձել երկրորդական թերթ: Դրա համար էլ հաջորդ տարիներին մամուլում էական անդրադարձներ չկան:

Խորհրդային իշխանության առաջին տասնամյակներին գաղափարախոսական սահմանափակումների պատճառով Հայաստանում ազգային-ազատագրական պայքարի պատմությամբ զբաղվելը չեր խրախուսվում: Հատուկենտ գրքածիներում Ս. Փորբուգայանին ու «Արմենիա» թերթին ուղղակի անդրադարձներ գրեթե չկան, իսկ թեման լուսաբանվել է նախկին մտածողության և կոմունիստական թելադրանքի անհաջող «համաձայնեցումներով», կուսակցականության շեշտադրմամբ, դասակարգային մեկնակետով և վերապահումներով<sup>35</sup>:

Դայ ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությունը նոր մակարդակի բարձրացավ խորչչովյան ծննդայից հետո: Չթերագնահատելով մինչ այդ արվածը, նշենք, որ գրվեցին քարծը մակարդակի նոր ու իմանարար պատմագիտական աշխատությունները<sup>36</sup>: Խուսափելով «նացիոնալիստական» պիտակավորումից, դրանք առերևույթ այնքան էլ անմիջականորեն ազգային-ազատագրական պայքարի խնդիրները չեն լուսաբանում, սակայն լավագույն ներկայացնում էին պայքարի վերելքին նպաստող գրքոնները, նշում, որ ազգային-ազատագրական պայքարին ուներ նաև սոցիալական բնույթ<sup>37</sup>: Անշուշտ անժխտելի է նաև, որ խորհրդային պատմագիտությունը որոշ չափով հետազոտել է խնդրո առարկա թեմայի առանձին կողմերը, բայց տակավին ամբողջական աշխատություն չի ստեղծվել:

Անշարժանալով «Արմենիա»-ին՝ Զ. Կիրակոսյանը շեշտել է, որ Ս. Փորբուգայանն իր պարբերականով մեծապես նպաստել է հայոց վերազրունքի գործընթացին: Ծրանցելով կոմունիստական վարչակարգի սահմանափակումները՝ հեղինակը բարձր է գնահատել «քուրժուական «Արմենիան», իսկ խճաբարին համարել է հայ ժողովովիդ «քաղաքական մուրացկանության» օգտակարությանը կասկածող, խարվելուց չիղոնելու սովորությունը ու նրանց մեջ ընթառություն ներարկող, գիտակցված և մանրակի նախապատրաստված հեղափոխության կոչող գործիչ<sup>38</sup>: Նեղինակի կարծիքով Ս. Փորբուգայանը առաջիններից մեկը համացած, որ թուրքի նպատակն է եղել «ճաշել հայկական ցեղը յուր հայրենիքի միջն», և եթե հայ ժողովուրդը ժամանակին չափափի ու չպայքարի, կվորցնի ամեն ինչ, ու ինը

<sup>35</sup> Եօ, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. Ա, Փարիզ, 1934, նույնի՝ Անցեալից, Թիֆլիս, 1925, Մյամիկեան Ա., Ազգային հարցը առիվ, Սովորվա, 1919 և այլն:

<sup>36</sup> Ներփական Ս., Դայ ժողովովի պայքարը թուրքական բռնատիրության դեմ, Ե., 1955, Դովհաննելիսան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիր 2-րդ, Ե., 1956, Համբարյան Ա., Սպարազին հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Ե., 1965, Խուրշույն Լ., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964, Դովհաննելիսան Ո., Արևմտյան ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը, Ե., 1965, Բարսեղյան Խ., Սարդիկզմի տարածումը Հայաստանում (1880-ական թթ. - 1904), գիր 1, Ե., 1967, Վարդանեան Շ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հիսանները 19-րդ դ. վերջին քառորդում, Ե., 1967, Ղազարյան Շ., Արևմտահայերի սոցիալ-

<sup>37</sup> Դայ ժողովունյան Շ., Պատմագիտության գարգաւումը Սովետական Հայաստանում, Ե., 1967, էջ 315:

<sup>38</sup> Կիրակոսյան Զ., Բոլորուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 80-ական թթ., Ե., 1980, էջ 233:

է կկորսվի: Ըստ հեղինակի՝ «Արմենիան» առաջին թերթն էր, որ ժողովրդի տասապանքների մասին խոսեց բարձրածայն, վառեց ազգափրության ու հայրենասիրության կրակը: Մեծագույն նվազում է համարում այն, որ թերթն ընթերցողներին փոխանցում էր սեփական ուժերին կորնելու, համերաշխ գործելու և փոխադարձ օգնության միջոցով բաղձակի ազատությանը հասնելու դրույթը:

Պատմաբան Ա. Դամբարյանն էլ, քննարկելով «Արմենիա»-ի Փորբուգայան-արմենականներ առնչությունները՝ գրում է, որ իմանալով, թե իրեն ու իր թերթին են վերագրում Արմենական կուսակցության հիմնադրման պատիվը, Փորբուգայանը հայտարարել է, որ «Արմենիան» իր անունով երեւէ կուսակցություն չի հիմնադրել: «Անուաննեալիվ, արմենականները շարունակում էին «Արմենիա»-ն համարել իրենց զաղափարական օրգանը», - նշում է Համբարյանը և ավելացնում, որ արմենականները «Արմենիա»-ի հետ կապված էին միայն գաղափարապես»<sup>39</sup>: Կիսում ենք հեղինակի տեսակետը, թերթը նորարար գաղափարների յուրահատուկ շտեմարան էր և մեծ ներդրում ունի հայ քաղաքական մտրի մշակման գործում:

Պատմաբան Յ. Վարդանյամը, պարզաբանելով հայության ազատագրության հնարավոր ուղիները, իրավացիորեն շեշտել է, որ հայրենասիրությամբ և արիության ոգով տողորված «Արմենիա»-ի «խմնիրն էր հայերի ծանր վիճակի մասին իրացել աշխարհի պրոգրեսիվ նարկությանը, իրենց եղբայրների ազատագրության շուրջ կենտրոնացնել պայքարի զաղափարապատությունը»<sup>40</sup>:

1950-ականների երկրորդ կեսերի վախվորած և գգուշակոր աշխատություններին աստիճանաբար փոխարինելու եկան ավելի համարձակ ու նախապատասխապ երկեր, որոնցում ընդհանուր, տեսական նախապայմանների քննարկումներից բացի տեղ էին գտնում արդին նաև ազատագրական պայքարի շատ որոշակներ, կատարվում էին տեսական, գաղափարական եզրահանգումներ<sup>41</sup>:

Խորհրդային կայսրության վերջին տարիներից սկսած, առավել ևս Հայաստանի անկախության հոչակումից հետո, հայ ազատագրական շարժման, մամուլի, Ֆիդյայական պայքարի, կուսակցությունների և մի շարք այլ հարցերի պատմությամբ ուստումնականներն ավելի հաճախ սկսեցին զբաղվել<sup>42</sup>:

<sup>39</sup> Համբարյան Ա., նշվ. աշխ., էջ 160: Ժամանակաշրջանի շատ ու շատ կմնայում հարցեր ծիշու ընկալելու խնդրում մեզ համար օգտակար են եղել նաև հեղինակի «Ազգարյան հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914)», Ե., 1965, «Երիտրությունի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժմները Արևմտյան Հայաստանում (1908-1914)», Ե., 1979, աշխատությունները, թեև ամմիջականներն նվիրված չեն «Արմենիա» թերթի պատմությամբ»:

<sup>40</sup> Վարդանյան Յ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դ. վերջին քառորդում, Ե., 1967, էջ 291:

<sup>41</sup> Ա. Դովհաննելիսան Ա., Ս. Երևանյանը, Գ. Ղարիբջանյանը, Ս. Երևանյանը, Զ. Կիրակոսյանը և ուրիշներ, օգտագործելով հնարավոր բոլոր միջոցները, մուտք էին գործում տարբեր արիմիվներ, որուս թերթը մինչ այդ արգելված վավերագրեր, հրատարակում և դարձնում հանդուրդան սեփականությունը:

<sup>42</sup> Գևորգյան Յ. Ազգատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հեռոսապատմից, Ե., 2012, նույնի՝ Ազգատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Ե., 2002, նույնի՝ Հայոց ազատամարտի գիմնան և ֆինանսավորման խնդիրը (1890-1908 թթ.), Ե., 2004, Խոտիդինյան Գ., Հայաստանում 1880-1908 թթ. դարի հայության պատմության մասին, ակնարկներից մեջ կատարված կացությունը 1800-1870 թթ., Ե., 1967 և այլն:

<sup>37</sup> Դայ ժողովունյան Շ., Պատմագիտության գարգաւումը Սովետական Հայաստանում, Ե., 1967, էջ 315:

<sup>38</sup> Կիրակոսյան Զ., Բոլորուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 80-ական թթ., Ե., 1980, էջ 233:

Արժնորելով Մ. Փորբուզայանի ազգանվեր գործունեությունը՝ ակադեմիկոս Գ. Գալոյանն իրավագիրեն նշում է, որ նա ժողովորի ազատության համար ուղիղ ելած փաղանգի հավատավոր ներկայացուցիչն էր և իր «Արմենիայով հայոց մեջ զինված պայքարով ազատագրվելու գաղափարախոսության հիմնադիրներից մեկը եղավ»<sup>43</sup>: Իսկ ազատագրական շարժման վերելքը, ըստ Ստ. Պողոսյանի, պայմանավորված էր տնտեսական, քաղաքական, մշակութային և միջազգային ազդակներով, որոնք հայ մարդու մեջ փոփոխության պահանջ առաջարին: Այդ լուսավոր գաղափարի առաջին սերմանողներից մեկը նա «Արմենիան» է համարում<sup>44</sup>:

Դայ ազատագրական պայքարում «Արմենիա»-ի դերակատարությունը իրատեսորեն է գնահատել է. Կոստանդնյանը: Ըստ նրա՝ Եվրոպայից դրւս մղվելուց հետո օսմանյան իշխանությունները կայսրության արևելյան շրջաններում վարեցին հայահալած քաղաքականություն, որի արդյունքում հայ և թուրք ժողովուրդների միջև եղած հայաստանունը վերածեց «ով-ումի» անցիցում պայքարի: Այդ գոյակրվի ակունքներում Կոստանդնյանն առանձնահատուկ տեղ է հատկացնում «Վանում հեղափոխական սերունդ ստեղծող»<sup>45</sup> Փորբուզայանին: Բարձր գնահատելով վերջինիս կրթալուսավորական ու կազմակերպչական գործունեությունը և չներելով «ցուցանոլ արարքներոց»<sup>46</sup> պատմաբանը շեշտում է, որ Մ. Փորբուզայանի աշակերտներն ստեղծեցին հայ անդրանիկ Արմենական կուսակցությունը»<sup>47</sup>:

Դեգեյան սկզբունքով բանաձևելով ազգային կուսակցությունների եռամիանությունը՝ թե՛ս (արմենականություն), հակարեց (հենչակյաններ)՝<sup>48</sup> և սիմթեզ (դաշնակցություն), Գ. Խուլիկյանը նշում է, որ արմենականությունն առաջարից

մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005, Դայ ազգային և Յայաստանի ու Անդրկովկասի տողախոսական կուսակցությունների պատմության ակնարկներ 1885-1914 թթ., Ե. Կոստանդնյանի խմբագրությամբ, Ե., 2003, Դակորյան Ա., Յայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Ե., 1998, Ներսիսյան Ա., Հ.Յ. դաշնակցութեան պատմութիւն (1898-1908), հ. Բ և Գ, Պեյրուր, 2008, Պեյրուր, 2013, նույնի նորբեր, Ե., 2007, նոյնի՝ Ավետիք Սահակյան, Ե., 2006, Արդարյան Ա., Դայ Սահմանադրամական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.), Ե., 2009, նույնի՝ 1885-1908 թթ. հայ ժողովորի ազգային պատասխական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Ե., 2010, Դովիսաններ Գ., Դնչակյան կուսակցության պատմություն (1887-1915 թթ.), Ե., 2012, Կարապետյան Ա., Արմենական կուսակցության կազմակորումը և գործունեությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, թեկնածուական ատեմախոսության սեղմագիր, Ե., 1995 և այլք:

<sup>43</sup> Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 404:

<sup>44</sup> Պողոսյան Ստ., Դայոց ցեղասպանության պատմություն, հ. 1-ին, Ե., 2008, էջ 382:

<sup>45</sup> Կոստանդնյան Ե., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005, էջ 89:

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 90-91:

<sup>47</sup> Կոստանդնյան Ե., Սկրտիչ Խրիմյան (հասարակական-քաղաքական գործունեությունը), Ե., 2000, էջ 325:

<sup>48</sup> Ընդհանուր առմամբ, ընդունելով հանդերձ հեգեյան այս բանաձևում, այնքան էլ համամիտ չենք հայ ազատագրական շարժման ակունքներում կանգնած կուսակցություններին ու նրանց առաջ քաշած տեսակետները դիտարկել որպես հակադիր թեսուներ: Ի վերջո, նրանք այնքան էլ լավ չէին տիրապեսում տարբեր իզմ-երին և անում էին այն, ինչ կարողանում էին, անկախ նրանից, թե ինչ էին մտածում կամ ինչի շուրջ էին բանավիճում ժմեներում նստած տեսաբան-առաջնորդները:

«ազգային հեղափոխության» գաղափարը, որը պետք է հիմնվեր սեփական ուժերի և հնարավորությունների վրա: Այդ ուժերի ցրված լինելն ու տկարությունը հանգեցրին Փորբուզայանի կողմից «Ներքին ուժի» ձևավորման ռազմավարական խնդրի առաջադրմանը որպես արտաքին հանգամանքների բարենպաստ դասավորությունից օգտվելով վճռորոշ պայման»<sup>49</sup>: Պատմաբանի բնորոշմանը Ս. Փորբուզայանը հստակ գիտակցում էր, որ հայ ժողովուրդը դեռևս պատրաստ չէ սկսվող ազատագրական մաքառումներին, ինչն էլ հանգեցնում էր նախ կրթվելու, կազմակերպվելու, ապա՝ նաև սեփական ուժ կազմակերպելու գաղափարին: Սակայն հայ երիտասարդության արմատական թվականը դժգոհ մնաց «Արմենիա»-ի չափավոր ուղեգծից և որդեգրելով անմիջապես գործելու ու առանց հապաղելու արդյունքներ տեսնելու մարտավարություն՝ «հակարեց միջյանց ազգային դասը ու համամարդկային ազատագրության իդեալը»<sup>50</sup>: «Արմենիան», փորձելով կողմնորոշվել իր դասանած սկզբումների և «Դնչակ»-ի առաջ քաշած թեզերի միջև, նկատում էր, որ «արաջինը մնեն հայու ափին մեջ մեկ մեկ մարդինի հրացան կուզք տեսնել, երկրորդը ամեն Հայու գանկին մեջ «Կարլ Մարքս»ի միջամած վարդապետութիւնները կուզք գտնելով»<sup>51</sup>: Ուստի, երբ «Արմենիա»-ն «Դնչակ»-ի կտրուկ հարցադրումներին պատասխանում էր «Երազով կ Երազում»<sup>52</sup> և «Միութիւնը զօրութիւնը է»<sup>53</sup> ձևակերպումներով, ապա ակնհայտ է դառնում, եզրակացնում է Գ. Խուլիկյանը, որ «նման բանաձևումների տեսական-գաղափարախոսական «պարզունակությունը գործնական գետնի վրա» պատրաստականու հարցությունը»<sup>54</sup>:

Թերի հիմնադրման պատմությանը հետաքրքիր, սակայն մեզ համար անընդունելի տեսակետ է հայտնել Լ. Ալյոսհնը: Նրա կարծիքով, քանի որ օսմանյան իշխանությունները խիստ հսկողություն էին սահմանել ընդդիմադիրների նկատմամբ. «Վերջիններս տիպաված եղան Մ. Փորբուզայանին գործութել կ) Սպահեւ...»:

Դայ ազգային-ազատագրական պայքարի, կուսակցությունների ու անհատ գործիչների պատմությունը շարադրելու գործում հուշագրությունները խիստ կարևոր են, իսկ «Արմենիա» թերթի դեպքում, երբ արխիվային վագերագրերը սակավ են, դրանք ավելի կարևորվում:

Արմենական-ռամկավար հուշագրիները հիմնականում դրական են գնահատում Փորբուզայանի գործունեությունն ու «Արմենիա»-ն: Դնչակյան հուշագրիների<sup>55</sup> մոտ նկատելի է երկու նույնություն. 1890-ական թթ. գրված

<sup>49</sup> Խուլիկյան Գ., նշվ. աշխ., էջ 118:

<sup>50</sup> Նույն տեղում, էջ 121:

<sup>51</sup> Խուլիկյան Գ., նշվ. աշխ., էջ 118:

<sup>52</sup> Սեր ընկերք-մեր ոյժը, «Դնչակ», 1891, թիվ 3, մարտ, էջ 2:

<sup>53</sup> «Արմենիա», 1891, 15 յուլիս, թիվ 90:

<sup>54</sup> Խուլիկյան Գ., նշվ. աշխ., էջ 124:

<sup>55</sup> Յուշեր Արմենակ Եկատերինի, Պեյրուր, 1885, Տաճարեան Մ., իմ յուշերս, խմբագրեց Եւ ծանօթագրեց Վաչէ Ղազարեան, Պեյրուր, 1885, Թերթլմեզյան Փ., Կյանքիս հուշերը (մեթենագիր), տես Դայաստանի ազգային պատկերապրահա, հուշածեռագրային բաժին, ֆ. 60, տ. 11, թղ. 27, 28, Պողոսեան Յ., Սեր դերը. ի՞նչ եղաւ եւ ինչպիսի ըլլայ, Պոսթոն, 1935, նույնի՝ Կուսակցական կեանքի յուշերս, Պեյրուր, 1987:

<sup>56</sup> Եանկալուեան Յ., Յիշափական հայութիւնը հայկական ամսագիր, Պոստոն, 1927, թիվ 11, սեպտեմբեր, էջ 124-138, 1927, թիվ 1, նոյեմբեր, էջ 122-135, 1927, թիվ 2, դեկտեմբեր, էջ

հուշերում բոլորն անխսիր քննադատում են Ս. Փորբուգայանին, պահպանողական անվանում: Հետագայում, նեղվելով ՀՅԴի տիրապետող դիրքերից, սկսում են դրական վերաբերվել հավանական դաշնակից դարձած արմենականներին, նրանց հոգևոր հայր Ս. Փորբուգայանին ու նրա թերքին: ՀՅԴ հուշագիրները<sup>57</sup> գնահատում և ներդամանությունը են դրսերում Ս. Փորբուգայանի ու «Արմենիա»-ի առաջին տարիների գործունեության վերաբերմանը, իսկ հետագայում՝ հատկապես գաղափարական հարցերում, քննադատում են: Ավելի ուշ, զնահատելով Ս. Փորբուգայանի դաշնակցամենտ պահվածքը և «Արմենիա»-ն համարելով «անվտանգ», առիթը ներկայանալու դեպքում օգտագործում են թերթի ամբիոնը:

Թեև գերօ չեն կուսակցականությունից, սակայն փաստառատ են և սկզբնայրութիւ արժեք ունեն Ս. Եկարյանի հուշերը: Դրանցում ներկայացնելով հետափիտքյան արշալուսը՝ նա նշում է, որ «Արմենիան ամեն կողմն տարածուած էր եւ՝ «Մշակի հետ երիտասարդութեան մտքին հայրենասիրական թոշք մը կուտար» և «զարկ մը տրվեց երկրի շարժումին»<sup>58</sup>:

1880-ական թթ. մինչև 1896 թ. ներառող Ս. Տաճառյանի հուշերի առաջին մասում<sup>59</sup> Փորբուգայանին հետափան իրավացիորեն մեղադրում է այն բանում, որ «իր յեղափիտքյան գիտին մէջ շատ ջուր խանանած էր, այնպէս որ իր իմանած «Արմենիա» թերթին ի սկզբան տաւ չափաւրական ուղղութիւն մը» և որ ինքը «խաղաղ առաջադիմական» էր ու «Երկու գաղափարներու միջեւ կտարութերէ, կտայեափիտքյան ուղղութիւն մը ունէր»<sup>60</sup>:

Անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի վարչակարգ է գոյություն ունեցել հայրենիքում, Սիյուտքում գրվել են պատմագիտական ուսումնասիրություններ, որոնք, անկախ լույսնեածայն բից, մեկտեղ ենք և միասնաբար քննարկել: Դրանք փաստառատ են, պարունակում են սրափ վերլուծություններ և եզրականգումներ:

Սիյուտքում լույս տեսած աշխատություններից առանձնանում է ռամկավար Ա. Դարբինյանի պատմագիտական ուսումնասիրության ու հուշագործյան

112-130, 1928, թիվ 3, հունվար, էջ 114-128, 1928, թիվ 4, փետրվար, էջ 123-135, 1928, թիվ 5, մարտ, էջ 102-114, Աղամիրեան Խ., Հայ սոցիալ-դեմոկրատական «Հնչակ» կուսակցության և նրա գործունեության մասին, Բարու, 1925, ՀԱԱ, ֆ. 1456, գ. 2, գ. 24, Սապահ-Գիլեան Ստ., Փորբ Հայրի յիշատակներ, Զիկագո, 1917, թերթեան Ո., Պատրամների շրջանից և այլն:

<sup>57</sup> Ուրեմն, Հայ յեղափիտքյան մը յիշատակները, Ե., 1990, Փափագեան Վ., Իմ յուշերը, հ. առաջին, Պութքն, «Հայրենիք» տպարան, 1950: Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, մաս 4-րդ, 1937, թիվ 4, էջ 144-149, մաս 5-րդ, 1937, թիվ 5, էջ 135-141, մաս 6-րդ, 1937, թիվ 6, էջ 150-153, Լեզն Խառնուեանի յուշերը, գրի առաւ Ն. Չանգոյ, «Հայրենիք» ամսագիր, 1923, թիվ 7, էջ 176-187, Կարոյ առաջին դեպքը, «Ծերամ Ղազարեանի յուշերը», «Դիվան ՀՅ Դաշնակցության», հատ. առաջին, Պութքն, 1934, էջ 3-10, Նետն Կանոնյեանի յուշերն ամփոփեց Արտեն Թերլեներեան, «Հայրենիք» ամսագիր, 1956, թիվ 4, էջ 87-97, Մուտեան Վ., Կարոյնեսից Սարգար վարժապետը եւ Ազուտի դեպքը, «Տարոնի արժեք», օրգան տարոնական ոգու, 1941, թիվ 17, էջ 8-14, Ֆերահեան Ս., էջ մը անցեալէն «Հայրենիք», 1925, թիվ 1, էջ 130-132, տե՛ս նաև Յեղափիտքյան խմորումներ (1890-1896), «Հայրենիք» ամսագիր, 1953, թիվ 1, էջ 1-14 և այլն:

<sup>58</sup> Ցուշեր Արմենակ Եկարեանի, Պեյրու, 1985, էջ 23:

<sup>59</sup> Տաճառյան Ս., Իմ յուշերս, հմբագրեց եւ ծանօթագրեց Վաչէ Ղազարեան, Պեյրու, 1985:

<sup>60</sup> Նոյն տեղում, էջ 25-29:

շալային աշխատությունը<sup>61</sup>, որում հեղինակը բարձր է գնահատում «քուրո բանապետութեան դէմ օքրոսուտացող դասակարգի բողոքի ծայն «Արմենիան»<sup>62</sup>: Նա շեշտում է, որ «Արմենիա»-ի հրատարակությունը և «անոր միջոցավ արտայայ-տուած առողջ զաղափարներն են, որ ներշնչեցին փորբուգայեաններուն որոշ ուղղութիւն եւ մարմին մը տալով իրենց զաղափարական միութեան, սկիզբը դարձնել զայմ նաեւ հայ անդրանիկ յեղափիտքյան կուսակցութեան»<sup>63</sup>: Խոսելով ազատագրական շարժման նախակարապետներ Ս. Խորիմյանի և Ս. Փորբուգայլ-յանի համագործակցության մասին Ա. Դարբինյանն իրավացիորեն եղավականություն է, որ «Անոնք 40-50 տարի առաջ խորապես այն համոզման եկած էին, թե հայերը Թուրքիոն մէջ ինքնապաշտպանութեան պէտք է դիմեն ամեն բան առաջ, ուզեցին արթնցնել հայ ժողովրդի ինքնագիտակցութիւնը, բայց բնաւ չըսին, թե փուրկուութեամբ և տպայական ցոյցերով կարելի պիտի ըլլա ժողովուրդն ապատամբութեան մղել»<sup>64</sup>: Սիամանանակ հեղինակը խոսում է Ս. Փորբուգայանի երթենն դրսերով ցուցանու և անտեղի արարքների մասին:

«Արմենիա»-Արմենական կուսակցություն առնչությունները քննարկող Վ. Ղազարյանը կուսակցության զաղափարական հոգևոր հայր է համարում Ս. Փորբուգայանին, իսկ ծնիչ՝ «Արմենիա»-ն. «Դայութիւնը, հաւանաբար նկատի ունենալով, որ կազմակերպութեան յարած անդամները ստանձնած էին Փորբուգայեանի «Արմենիա» թերթին ցրումը և դարձած անոր միտքերուն տարածիչը, կուսակցութեան անդամները ծանչացաւ իրեն արմենականներ, եւ այդախով է որ շարժումն ինքովն անուանեց Արմենական կազմակերպութիւն»<sup>65</sup>: Իսկ հետագայում, երբ կուսակցությունն արդեն գործնական աշխատանքներու շրջանին մեջ էր, հնարավոր էր համարվում «օգտուիլ այդ թերթին մէջ Երեւացած թելադրութիւններէն»<sup>66</sup> և նյութապես օգնել, իսկ հետո դարձնել իրենց օրգանը:

